

# ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԴԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ ARMENIAN MODERNITIES

modernities.am

ԲԱՐՔ ԵՎ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
MORES AND POLITICS

ԾՐԱԳԻՐ | PROGRAM



NOV. 18-19 ՆՈՅԵՄԲԵՐ 2022

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ  
INTERNATIONAL CONFERENCE

«Մշակույթ և արդիականացում» ծրագիրը Հովհաննիսյան ինստիտուտի *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագծի* մասն է: Ծրագիրն ուշադրության կենտրոնում է պահում ավանդված վարքուբարքի և արդիականացման ծրագրային գործընթացների փոխակերպվող կապերը՝ հակասություններն ու սերտաճումները: Հայությանը պատմականորեն բաժին ընկած խոր ցնցումների պատճառով արդիականացման նախագծերը ոչ այնքան մշակվել են տեղական իրականության սոցիալ-մշակութային կացության ըմբռումից ելնելով, որքան ծնվել հրատապ քաղաքական կարիքներից՝ որպես ազատագրման բաղձալի ծրագրեր: Եթե հայության վարքուբարքն իր առանձնահատկություններով ավանդաբար եղել է Հարավարևմտյան Ասիայի ժողովուրդների մշակույթի մասը, ապա այն արդիականացնելու քաղաքականությունները մեծապես սնվել են եվրոպական քաղաքակրթական հարացույցներից: Արդյունքում պաշտոնական քաղաքականություններն ավանդաբար լարման մեջ են հայտնվել ժառանգված մշակութային այն դրվածքի հետ, որով ապրել է հայ ժողովրդի մեծամասնությունն ամօրյա կյանքում:

Ինչպես ցույց է տվել մտքի պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը (1887-1972), այս բևեռացումն արտահայտվել է հայ ժողովրդի երկու ուղենշային ազատագրական մտայնությունների մեջ. մի կողմից վերնախավերի «ազատագրական լեգենդ» էր, որը հայերի ազատագրումը կապում էր քաղաքական-դիվանագիտական գործունեության և արտաքին ուժի միջամտության հետ, մյուս կողմից ժողովրդական ներքնախավերի բաղձանքներն էին, որոնք ազատագրումը կապում էին իրենց հողուջրից ելած «քաջաց տան» հետ: Այսպես, քաղաքականությունն ու բարքը, օրենքն ու օջախը, քաղաքացիական հարաբերություններն ու արյունակցական կապերը հայտնվել են լարման մեջ՝ երկուստեք փոխակերպելով իրար:

Մշակույթի արդիականացման քաղաքականություններն՝ ընթանալով հրատապության ռեժիմում, անհրաժեշտաբար ունեցել են չծրագրված սերտաճումներով լի կիսակատար հետևանքներ, որոնք չեզոքացնելու միտված նոր՝ որպես կանոն առավել արմատական քաղաքականություններն իրենց հերթին վերարտադրել են այս կիսակատարությունը նորովի և այսպես շարունակ: Արդյունքում գոյացել է հայաստանյան խառնակերտ այն իրականությունը, որը հասկանալի հնարավոր է, եթե ուշադրության կենտրոնում են պահվում մշակույթի և արդիականացման միջև լարումներն ու դրանց սերտաճումները: Հայոց կյանքի տարբեր կողմերն այսօր ուսումնասիրվում են մի

շարք ուղղություններով, բայց մշակույթի և արդիականացման քաղաքականությունների միջև այս լարումն իր բարդ ու փոխակերպվող հետևանքներով չի դարձել հետևողական գիտական հետազոտության առարկա: Որպես կանոն լարման բևեռներն ուսումնասիրվում են առանձին և չեն ըմբռնվում որպես անքակտելի ու նաև արտադրող ներհակություն: Արդյունքում հաճախ մի կողմը խաղարկվում է ընդդեմ մյուսի, ինչը չեզոքացնում է դրանց փոխադարձ ու հակադարձ կապերը հասկանալու և փոփոխման հեռանկարներ ուրվագծելու հնարավորությունները:

«Մշակույթ և արդիականացում» հետազոտական ծրագիրն իր թեմատիկ մոդուլներով հետևողական բազմագիտակարգ հետազոտության նյութ է դարձնում մշակույթի և արդիականացման գործընթացների միջև լարումների ու սերտաճումների դինամիկան իր տարբեր կողմերով: Ծրագիրը պատմագիտական, արվեստաբանական, փիլիսոփայական ու գրականագիտական խաչվող դիտանկյուններից կոնկրետ նյութի հիման վրա ուսումնասիրում է մեր կյանքը զգալիորեն սահմանող այս բարդ դինամիկան:

“Culture and Modernization” is part of the larger research project entitled *Studies in Armenia Modernities* by the Johannissyan Institute. The changing connections between the inherited mores and customs on the one hand and the programmatic processes of modernization on the other hand, with their contradictions and congruences are at the center of the project. Historically, it is due to the perpetual upheavals that the projects of political modernization in Armenia have not so much been formulated according to a deep understanding of local socio-cultural conditions as they have been created out of urgent political needs and postulated as wishful programs of liberation. If Armenians traditionally formed part of the culture of the people of West Asia, the political projects of their modernization were primarily fed from European civilizational paradigms. As a result, official politics traditionally appeared in high tension with inherited cultural predilections that came to shape the everyday life of the majority of Armenians.

As intellectual historian Ashot Hovhannissyan (1887-1972) showed, this polarization had found its reflection in the two paradigmatic orientations in the liberation thought of the Armenian people. On the one hand, we have the “liberation legend” of the elites which linked the liberation of the Armenian to political and diplomatic activities and to the intervention of external forces. On the other hand, there were the wishes of the lower strata of the society which attached the liberation to the “house of heroes” raised on their own soil. Thus, politics and mores, the law and the hearth, civic relations and blood connections have appeared in a mutually transforming tension.

The politics of cultural modernization proceeding with the regime of urgency, have necessarily remained incomplete with unforeseen congruences while the new, and as a rule, more radical politics that came to neutralize the consequences of the former, have in turn reproduced this completeness anew and so forth. This has resulted in the formation of a mixed Armenian reality that may lend itself to understanding if one keeps the attention on the tensions and congruences between culture and the politics of modernization. The different sides of Armenian life are today being examined in various directions. But, the above tension between the inherited culture and the politics of modernization itself has not been subjected to consistent scholarly scrutiny. As a rule, these two formative poles of Armenian reality are examined separately and are not conceived in terms of an inextricably interconnected contradiction. The result is that one side

is often played out against the other and the possibility of understanding their mutual and opposing connections and therefore, of charting prospects of their transformation, is neutralized.

The research project "Culture and Modernization" with its thematic modules offers a multidisciplinary perspective on the dynamic tensions and congruences between culture and the processes of modernization. The project examines this complex dynamic notably formative for our lives through concrete case studies and from the intersecting perspectives of history, art history, philosophy and literary studies.

**10:00 - 10:15** Մասնակիցների գրանցում

**10:15 - 10:35** Վարդան Ազատյան  
Բացման խոսք

**Նիստ 1. Եկեղեցին և ժողովուրդն արդիացման հեռանկարում**

**10:35 - 12:20** Վարող՝ Աշոտ Գրիգորյան

**Հաչիկ Գազեր**

*Կայգերական Գերմանիո հոգեւորականներու եւ աշխարհականներու օգնութեան կոչերը ի նպաստ հայերու. 1896-1920*

**Նարե Սահակյան**

*Արդիացումը տեղական բարքով. Գալուստ Տեր-Մկրտչյանի արևմտասիրությունը*

**Լուսինե Չերգեշյան**

*Ամուսնական կյանքի «սրբութիւնը» և կնոջ ազատագրման խնդիրը. մի բանավեճ Կարապետ վարդապետի և Տիկին Հրանուշի միջև*

**12:20 - 13:00** Սուրճի ընդմիջում

**Նիստ 2. Գրականությունը առօրյայի և քաղաքականության միջև**

**13:00 - 15:15** Վարող՝ Իրինա Շահնազարյան

**Զաալ Անդրոնիկաշվիլի**

*Վրացական արդիությունները. ազգային, միջազգային, խորհրդային*

**Սիրանուշ Դվոյան**

*Տոհմիկ աշխարհի և եվրոպական արդիացման միջև. 20-րդ դարասկզբի հայոց կյանքը խորհրդահայ վիպագրության մեջ*

**Տիգրան Մաթոսյան**

*Խուսափում անորոշությունից: Առօրեականության դրսևորումները Վանի 1915 թվականի ինքնապաշտպանության ժամանակ*

**Աննա Գալստյան**

*Որքն իբրև սեփական պատմության հեղինակ. մերժումից անդին*



**11:00 - 11:15** Մասնակիցների գրանցում

**Նիստ 3. Ֆրանսիական լուսավորությունը և հայ արդիական միտքը**

**11:15 - 13:00** Վարող՝ Նարե Սահակյան

**Աշոտ Գրիգորյան**

*19-րդ դարում ժան-ժակ Ռուսոյի հայկական ընդունելության երկու դեպք. Հովհաննես Չամուռճյան և Միքայել Նալբանդյան*

**Ալլա Զլատոպոլսկայա**

*Ռուսոյի կրոնա-էթիկական հայացքները  
19-րդ դարի ռուս մշակույթում*

**Ժիրայր Մալխասեան**

*Ո՞ր Ռուսոն թարգմանել*

**13:00 - 14:00** Սուրճի ընդմիջում

**Նիստ 4. Խորհրդային արդիականացում. կենցաղ, արվեստ, քաղաքականություն**

**14:00 - 15:45**

Վարող՝ Սիրանուշ Դվոյան

**Իրինա Շահնազարյան**

*Քաղաքական կարգի ու հաստատված կենցաղի  
«հրեշավոր կենսակցությունը»*

**Լուսին Շաբոյան**

*«Անիծված նյութական սղությունը» և լուսավորության  
«Նահատակները» 1920-ականների Խորհրդային  
Հայաստանում*

**Դմիտրի Խմելևիցկի**

*Ստալինյան կոնստրուկտիվիզմ*

**10:00 - 10:15** Registration

**10:15 - 10:35** Vardan Azatyan  
Opening Remarks

**Panel 1. People and the Church from the Perspective of Modernization**

**10:35 - 12:20** Moderator: Ashot Grigoryan

**Haçik Gazer**

*Calls for Help for Armenians by Clergymen and Laymen in Imperial Germany, 1896-1920*

**Nare Sahakyan**

*Modernization with Local Mores. Galoust Ter-Mkrtchyan's Love for the West*

**Lusine Chergeshtyan**

*The "Sanctity" of Marriage and Women's Emancipation: on a Polemic between Karapet the Priest and Madam Hranush*

**12:20 - 13:00** Coffee Break

**Panel 2. Literature Between Everyday Life and Politics**

**13:00 - 15:15** Moderator: Irina Shakhnazaryan

**Zaal Andronikashvili**

*Georgian Modernities: National, International, Soviet*

**Siranush Dvoyan**

*Between the World of Nobility and European Modernization. Early 20th Century Armenian Life in Soviet Armenian Novels*

**Tigran Matosyan**

*Uncertainty Avoidance. Manifestations of Everyday Life during the 1915 Self-Defense of Van*

**Anna Galstyan**

*The Orphan as Author of Her Own Story: Beyond Rejection*

NOVEMBER  
18



**11:00 - 11:15** Registration

**Panel 3. French Enlightenment and Armenian Modern Thought**

**11:15 - 13:00** Moderator: Nare Sahakyan

**Ashot Grigoryan**

*Two Cases of the Armenian Reception of Jean-Jacques Rousseau: Hovhannes Chamurchian and Michael Nalbandyan*

**Alla Zlatopolskaya**

*The Religious-Ethical Views of Jean-Jacques Rousseau in 19th Century Russian Culture*

**Gérard Malkhassian**

*Which Rousseau to Translate?*

**13:00 - 14:00** Coffee Break

**Panel 4. Soviet Modernization. Everyday Life, Art, and Politics**

**14:00 - 15:45** Moderator: Siranush Dvoyan

**Irina Shakhnazaryan**

*The "Monstrous Cohabitation" of the Political Order and the Established Customs*

**Lusin Shaboyan**

*"Damned Material Scarcity" and the "Martyrs" of the Enlightenment in 1920s' Soviet Armenia*

**Dmitry Khmelnskiy**

*Stalinist Constructivism*

NOVEMBER  
19

## ՀԱՉԻԿ ԳԱԶԵՐ

### **Կայգերական Գերմանիո հոգևորականներու եւ աշխարհականներու օգնութեան կոչերը ի Նպաստ հայերու. 1896-1920**

19-րդ դարի վերջը տարբեր երկիրներու մէջ Քրիստոնեայ հոգևորականներ, աշխարհականներ, հոգևոր կազմակերպութիւններ ու հաստատութիւններ կոչերով կը հրաւիրեին մարդկանց օգնութիւն ցուցաբերել Արեւմտեան Հայաստանի հայ բնակչութեան: Մոտ հիսուն կոչեր լոյս տեսած են միայն կայգերական Գերմանիո տարբեր երկրամասերու մէջ 1896-1897 տարուան ընթացքին, իսկ 1897 թուականին մօտ քսան տարբեր քաղաքներու մէջ հիմնադրուած են «հայ ազգի օգնութեան կոմիտեներ»:

Համիդեան կոտորածներու պատճառաւ ստեղծուած ծայրայեղ ծանր իրավիճակի յաղթահարման համար ցուցաբերուած աշխատանքները, ովքեր, երբ եւ ինչ միջոցներով դիմած էին, կը ներկայացուին զեկուցման մէջ, ինչպէս նաև տեղեկութիւններ կը տրուին կոչերու աղբիւրներու մասին:

**ՀԱՉԻԿ ՐԱՖՅԻ ԳԱԶԵՐՆ** աստվածաբան է, արևելյան եկեղեցիների և մասնավորապես հայ եկեղեցու պատմության մասնագետ: Եկեղեցու պատմություն է դասավանդել Դրեզդենի համալսարանում, իսկ 2006-ի ձմեռային կիսամյակից Էրլանգեն-Նյուրեմբերգի համալսարանում Քրիստոնեական արևելքի աստվածաբանության և պատմության պրոֆեսոր է: 1993-ին Թյուրինգենի համալսարանի ավետարանչական աստվածաբանության ֆակուլտետում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և հաջորդող տարիներին հետազոտական աշխատանքով զբաղվել Բեյրութում, Երևանում, Փարիզում, Ստամբուլում և Վիեննայում: Հրատարակել է *Die armenische Kirche in Sowjetarmenien zwischen den Weltkriegen: Anatomie einer Vernichtung* (Münster; Hamburg; Berlin; London: Lit-Verlag, 2001) և *Die Reformbestrebungen in der Armenisch-Apostolischen Kirche im ausgehenden 19. und im ersten Drittel des 20. Jahrhunderts* (Göttingen: Vandenhoeck und Ruprecht, 1996) աշխատությունները:

# HAÇIK GAZER

## *Calls for Help for Armenians by Clergymen and Laymen in Imperial Germany, 1896-1920*

At the end of the 19th century in various countries Christian clergymen, laymen, religious organizations and institutions were urging their constituents to support the Armenian population of Western Armenia. Around fifty calls were published in various regions of imperial Germany throughout 1896-87 while in 1887 "Armenian national relief committees" were founded in approximately twenty different cities.

The paper presents work conducted for the purposes of the alleviation of the devastating impact of the Hamidian massacres, who and by what means responded to this call, as well as information about the sources.

**HAÇIK RAFFI GAZER** is a theologian specialized in the history of the churches of the East and particularly Armenian Apostolic church. He taught History of the Church in Dresden University and currently is a professor of the Theology and History of Eastern Christianity in Erlangen-Nuremberg University. In 1993 he defended his doctoral thesis in the Department of Evangelical Theology in Tübingen University and in the following years conducted research in Beirut, Yerevan, Paris, Istanbul and Vienna. His publications include: *Die armenische Kirche in Sowjetarmenien zwischen den Weltkriegen: Anatomie einer Vernichtung* (Münster; Hamburg; Berlin; London: Lit-Verlag, 2001) and *Die Reformbestrebungen in der Armenisch-Apostolischen Kirche im ausgehenden 19. und im ersten Drittel des 20. Jahrhunderts* (Göttingen: Vandenhoeck und Ruprecht, 1996).

# ՆԱՐԵ ՍԱՀԱԿՅԱՆ

## *Արդիացումը տեղական բարքով. Գալուստ Տեր-Սկրտչյանի արևմտասիրությունը*

Արդի հայագետ, Հայ եկեղեցու միաբան Գալուստ Տեր-Սկրտչյանը (1860-1918) դարադարձին ակտիվ մասնակցություն է ունեցել հայ ազգային կուսակցությունների ձևավորմանը՝ նախորդած հեղափոխական խմբակներում կրելով նարոդնիկական սոցիալիզմի ազդեցությունը: Տեր-Սկրտչյանը «մեր ամբողջ գոյութան ներքին իմաստը» համարում է հանուն «Արևմուտքի սիրո»՝ գրի, գիտության, ազգային գիտակցության այն մաքառումը, որ մղում է «բարբարոսների մեջ կղզիացած» հայ ժողովուրդը. դարեր շարունակ հայերի ազգային կյանքն ակոսած մի հակասություն, որ կամարում է գիտնականի աշխատանքը:

Չեկուցման առանցքը հոգևորական-գիտնականի՝ հանուն հայերի արդիացման գործելու այն հատուկ եղանակն է, որը միաժամանակ գիտակցում և առերեսում է տեղական բարքն ու ընդունված հարաբերությունների ձևերը: Լուրջ ընդունելով իր ձևակերպած հակասությունն ինքնին՝ Տեր-Սկրտչյանն ականջալուր է հայերի կյանքում դարեր կուտակված ապրուստին, նիստուկացին ու ընդունված կարգին և կրթական ու քաղաքական վերասլաց իդեալներին մոտենալու ճանապարհ է փնտրում իրեն իսկ կազմավորած այդ վարքուբարքի միջից:

**ՆԱՐԵ ՍԱՀԱԿՅԱՆ** արվեստաբան է, կուրատոր, Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտի հետազոտող: 2014-2017-ը զբաղվել է արվեստի քննադատությամբ և համադրել մի շարք հետազոտական ցուցահանդեսներ: 2021 թվականից Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում վարում է «Հետազոտության մեթոդներ» և «Արվեստաբանություն և ազգագրություն» դասընթացները: Ներկայումս «Եկեղեցի և ժողովուրդ. հայերի արդիականացման հեռանկարները դարադարձի էջմիածնում» թեմայով ներգրավված է Հովհաննիսյան ինստիտուտի «Մշակույթ և արդիականացում» ծրագրում: Մասնագիտական հետաքրքրություններն ընդգրկում են արվեստաբանության՝ իբրև գիտակարգի պատմությունը և հայագիտության սկզբնավորման խնդիրներն արևելահայաստանում:

# NARE SAHAKYAN

## *Modernization through Local Mores. Galoust Ter-Mkrtchyan's Love for the West*

Modern Armenologist and deacon of the Armenian Apostolic Church Galoust Ter-Mkrtchyan (1860-1918) has been part of the revolutionary activities leading to the formation of the Armenian national parties at the turn of the century, while at the same time being influenced by Narodnik socialism. Situating the Armenians as «surrounded by barbarians», Ter-Mkrtchyan gestures towards the Armenians «love for the West» which for him means Armenian writing, science, and national consciousness. The struggle for this «love» Ter-Mkrtchyan considers «as the inner sense of our entire existence.» Ter-Mkrtchyan scholarship is centered around this contradiction, which makes itself vehemently present throughout the centuries of Armenians' national life.

The main axis of the presentation is the specific manner the clergyman-scholar operates for the sake of the modernization of Armenians while realizing and facing the local mores and widely accepted social manners. Taking seriously the contradiction he articulated himself, Ter-Mkrtchyan is attentive towards the ways of life, the conduct, and the conventional order accumulated throughout centuries in the lives of Armenians. Through these mores Ter-Mkrtchyan seeks ways to approximate the educational and political ideals he has for the Armenian people.

**NARE SAHAKYAN** is an art historian, curator and researcher at the Ashot Johannissyan Research Institute in the Humanities. In 2014-17 she published art criticism and curated several research-oriented exhibitions. Since 2021 she teaches Research Methods, Art History and Ethnography at the Yerevan State Academy of Fine Arts. Currently she is involved in the project "Culture and Modernization" with the theme "The Church and the People: Prospects of the Modernization of Armenians in Etchmiadzin at the Turn of the Century". Her research interests include the history of the discipline of Art History and the formation of Armenian Studies in Eastern Armenia.

## ԼՈՒՍԻՆԵ ՉԵՐԳԵՇՏՅԱՆ

*Ամուսնական կյանքի «սրբութիւնը» և կնոջ ազատագրման խնդիրը. մի բանավեճ Կարապետ վարդապետի և Տիկին Հրանուշի միջև*

19-րդ դարի կեսից հայոց արդիացման հորիզոնում Է հայտնվում ընտանիքի բարեփոխման և կանանց հասարակական դերակատարության խնդիրը: Չեկուցումը դիտարկում է կանանց խնդիրների պաշտպան, հրապարակախոս Հրանուշ Թոփչյանի և հայ եկեղեցու բարեկրթիչ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի միջև 1903 թվականին տեղի ունեցած հանրային սուր բանավեճը, ուր կանանց հասարակական դերի փոփոխության ելակետը տրամագծորեն հակառակ դիրքեր բռնած բանավիճողների համար մնում է նույնը՝ ընտանիքի սրբությունը:

**ԼՈՒՍԻՆԵ ՉԵՐԳԵՇՏՅԱՆԸ** նկարիչ-անիմատոր է և հետազոտող, Հովհան-Նիսյան ինստիտուտի խորհրդի անդամ: Համագործակցել է Սոցիոսկոպ հասարակական կազմակերպության հետ՝ իրականացնելով «Սեռակա-նության սահմանագիծ. կնոջ դերակատարության վերաիմաստավորումը 19-րդ դարի հայ պարբերական մամուլում» հետազոտությունը (2016-2019): Եղել է Utopiana մշակութային ստեղծագործական կազմակերպության մե-դիա լաբորատորիայի ղեկավար (2006-2009), WOW արվեստի խմբի անդամ (2007-2010), Շողակաթ հեռուստաընկերության մանկական բաժնի համա-կարգչային ձևավորող և անիմացիոն շարքերի ռեժիսոր (2010-2018): 2017 թվականից աշխատում է Նաև OnOff անիմացիոն ստուդիայում:

# LUSINE CHERGESHTYAN

## *The Sanctity of Marriage and Women's Emancipation: on a Polemic between Karapet the Priest and Madam Hranush*

Starting from the mid 19th century the question of the reform of the traditional family and the social role of women arises on the horizon of modernization of Armenians. The presentation takes up a heated polemic from 1903 between one of the defenders of women's question, publicist Hranush Topchyan and a reformator of the Armenian Church Karapet Ter-Mkrtchyan. Although having diametrically opposing positions the starting point of the question of the change in women's social role for the interlocutors is the same: the sanctity of the family.

**LUSINE CHERGESHTYAN** is a media and animation artist, a video editor, and a member of Council of Johannissyan Institute. She has been collaborating with the NGO Socioscope conducting the research "The Confines of Sexuality: Women's Question in the 19th Century Periodicals" (2016-2019). She was the head of the media lab at the Utopiana Swiss-Armenian Cultural Creative Organization (2006-2009) and a member of WOW art collective (2007-2010), graphic designer and director of animation series at Shoghakat television channel (2010-2018). She works in OnOff animation studio from 2017.

## ԶԱԱԼ ԱՆԴՐՈՆՏԻԿԱՇՎԻԼԻ

*Վրացական արդիությունները. ազգային, միջազգային, սովետական*

Որո՞նք էին կապերը արդիության և ազգայինի միջև ու ինչպե՞ս էին դրանք փոփոխվում 1910-ական թվականներից մինչև 1970-ականներ: Ինչպե՞ս են գնահատվել Առաջին և Երկրորդ արդիությունների փոխակերպումները վերջին հարյուր տարվա ընթացքում: Կարո՞ղ ենք արդյոք խոսել վրացական խորհրդային արդիությունից, և եթե կարող ենք, ապա ինչպե՞ս և ի՞նչ հիմքով ենք դա անելու: Չեկուցումը ելևում է նրանից, որ ազգային, միջազգային և խորհրդային արդիությունները համագոյակցում են Վրաստանում 1910-ական թվականներից ի վեր մինչև 1930-ականներ և երբեմն, չնայած սուր բանավեճերին, նույնիսկ համագործակցում: Ստալինյան հակաարդիական դիրքորոշմանը (1932) հաջորդած շրջանում, Լավրենտի Բերիայի գլխավորությամբ, վրացական արվեստը ստիպված եղավ որդեգրել սոցիալիստական ռեալիզմի սկզբունքները, որոնք մերժում էին մոդեռնիստական արտահայտման եղանակները: Արվեստի բոլոր ուղղությունները կախված էին դասական ու ակադեմիական ոճերից:

**ԶԱԱԼ ԱՆԴՐՈՆՏԻԿԱՇՎԻԼԻՆ** Բեռլինի գրականության և մշակութային հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող է և Թբիլիսիի Իլիայի պետական համալսարանի պրոֆեսոր: Հետաքրքրված է Նարատոլոգիայի (սուժեի տեսության), գրականության մետապատմության, փոքր/փոքրամասնական գրականություն(ներ)ի, համաշխարհային գրականության, մշակութային իմաստաբանության, քաղաքական աստվածաբանության, Վրաստանի մշակութային պատմության, խորհրդային և հետխորհրդային մշակութային պատմության հարցերով: Հեղինակ է *Die Erzeugung des dramatischen Textes. Ein Beitrag zur Theorie des Sujets* (Berlin: Erisch Schmied Verlag, 2008); *Landna(h)me Georgien. Studien zur kulturellen Semantik* (Berlin: Kadmos Kulturverlag, 2018 (համահեղինակությամբ՝ Ֆրանցիսկա Թուն-Նոենշտայնի); *Uzljurebis dideba. Politikuri teologia sakartveloshi* (Glory of Feebleness. Political Theology in Georgia) (Tbilisi: Ilia State University Press, in Print) գրքերի: Ներկա հետազոտական նախագիծն է՝ «Գրականությունը Վրաստանում. փոքր և համաշխարհային գրականությունների միջև»:



# ZAAL ANDRONIKASHVILI

## *Georgian Modernities: National, International, Soviet*

What was the relation between modernism and nationality and how it changed from the 1910s to the 1970s? How did the assessment of the First and the Second Modernisms change during the last hundred years? Can we speak about Georgian Soviet modernism and if we can, how and on what grounds do we assess it? The paper assumes that national, international and Soviet modernisms co-existed in Georgia from the 1910s up to the 1930s and at times, despite the heated polemic, even collaborated. After Stalin's anti-modernist stance (1932), headed by Lavrenti Beria in Georgia, Georgian art was forced to adopt Socialist Realism, which rejected modernist forms of expression and depended upon the classic and academic styles in all artistic directions.

**ZAAL ANDRONIKASHVILI** is a research associate at the Center for Literary and Cultural Studies in Berlin and a Professor at the Iliia-State-University, Tbilisi. His research interests include narratology (theory of *sužet*), metahistory of literature, small/minor literature(s) – world literature, cultural semantics, political theology, cultural history of Georgia, soviet and post-soviet cultural history. His monographs include *Die Erzeugung des dramatischen Textes. Ein Beitrag zur Theorie des Sujets* (Berlin: Erisch Schmied Verlag, 2008); *Landna(h)me Georgien. Studien zur kulturellen Semantik* (Berlin: Kadmos Kulturverlag, 2018) (with Emzar Jgerenaia and Franziska Thun-Hohenstein) and *Uzlurebis dideba. Politikiuri teologia sakartveloši* [*Glory of Feebleness. Political Theology in Georgia*] (Tbilisi: Iliia State University Press (in Print)). Current project "Literature in Georgia. Between Small Literature and World Literature".

## ՍԻՐԱՆՈՒՇ ԴՎՈՅԱՆ

*Տոհմիկ աշխարհի և եվրոպական արդիացման միջև. 20-րդ դարասկզբի հայոց կյանքը խորհրդահայ վիպագրության մեջ*

20-րդ դարի նշանավոր երկու հայ գեղարվեստական երկերի՝ Եղիշե Չարենցի *Երկիր Նայիրի* և Գուրգեն Մահարու *Այրվող այգեստաններ* վեպերի ծնունդը սերտորեն կապված է 20-րդ դարասկզբին հայության կյանքում տեղի ունեցած քաղաքական մեծ փոփոխությունների հետ: Երկու հեղինակներն էլ հետահայաց պատկերում են իրենց մանկության աշխարհը՝ Կարսն ու Վանը, որոնք միմյանցից տարբերվելով որպես որոշակի նիստուկացով հատկանշվող աշխարհներ՝ մինևույն ժամանակ աչքի են ընկնում քաղաքական ազատագրության իդեալները գործնականորեն ընդունելու տարբեր եղանակներով: Եթե տոհմիկ ավանդույթներով ապրող վանեցին քաղաքական ազատագրությունը կարևորում էր սեփական կյանքի բարօրության տեսանկյունից, ապա արդիացման նշաններն ընդունած և հայացքը դեպի մեծ ու զարգացած աշխարհ շրջած կարսեցին դրանք որպես փրկարար հեռանկար էր ընդունում:

Չեկուցումն ամփոփելով կատարված հետազոտության արդյունքները՝ ուշադրություն է հրավիրում այն անհամաչափությունների և խորը հակասությունների վրա, որոնք հատկանշում էին 20-րդ դարի հայության կյանքը:

**ՍԻՐԱՆՈՒՇ ԴՎՈՅԱՆԸ** բանասիրական գիտությունների թեկնածու է, դոցենտ: Դասավանդում է Հայաստանի ամերիկյան համալսարանում և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում: Ժամանակակից սիյուռքահայ և արևմտահայ մի շարք հեղինակների հատորների խմբագիրն ու կազմողն է: Վերջին տարիներին զբաղվում է խորհրդային ստալինյան քստրոներին նվիրված գեղարվեստական գրականության ուսումնասիրությամբ: Հովհաննիսյան ինստիտուտում կազմել և հրատարակել է խորհրդահայ քստրոնական Վաչե Սարգսյանի *Ակեղղամա* եռահատոր վեպի առաջին հատորը: Ներկայումս «Քաղաքական ազատագրությունն ու կենցաղը խորհրդահայ վիպագրության մեջ. *Երկիր Նայիրի* և *Այրվող այգեստաններ*» թեմայով հետազոտությամբ ներգրավված է Ինստիտուտի «Մշակույթ և արդիականացում» ծրագրում: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են հանրային կյանքի և անձնական փորձառության փոխակերպումներում խոսքային պրակտիկաների, հանրության արդիացման արտիկուլացիաների, պետական բռնության ու դրանց գեղարվեստական վերարտադրության հարցերը:

# SIRANUSH DVOYAN

## *Between the World of Nobility and European Modernization. Early 20th Century Armenian Life in Soviet Armenian Novels*

The emergence of the two prominent 20th century Armenian novels – Eghishe Charents’s *Yerkir Nayiri* and Gurgen Mahari’s *Burning Orchards* are closely connected to the political maelstrom of early 20th century Armenian life. Both authors depict the world of their childhood – Kars and Van – through retrospection. These worlds are distinct from each other with their different customs and in terms of varying means through which they realize the political ideals of liberation. While the Vanetsi living with the customs of nobility values political liberation from the perspective of the wellbeing of personal life, the Karsetsi who has accepted the signs of modernization and turned his/her gaze towards the big developing world, was receiving these signs as a prospect of salvation.

The paper presents the results of the research by focusing on the inconsistencies and deep contradictions characterizing the life of 20th century Armenians.

**SIRANUSH DVOYAN** is a literary studies scholar. She teaches Comparative Literature at the American University of Armenia and at the Yerevan State Academy of Fine Arts. She is the editor of the volumes of a number of contemporary Diaspora Armenian and Western Armenian authors. Another field of her research interest is the experience of the Soviet state violence (GULAG) and its reflection in the literary texts. At the Johannissyan Institute, she compiled and published the first volume of the three-volume novel *Akeldama* by the Soviet-Armenian exile-writer Vache Sargsyan (Yerevan: Johannissyan Institute, 2019). Currently, she is involved in the “Culture and Modernization” project of the Institute with the theme “Political Emancipation and Everyday Life in Soviet-Armenian Fiction. *The Land of Nayiri* and *Burning Orchards*”. Her research interests include the culture of Armenian communities in post-Soviet realms, new diasporic experiences, and new articulations in literature.

# ՏԻԳՐԱՆ ՄԱԹՈՍՅԱՆ

*խուսափում անորոշությունից: Առօրեականության դրսևորումները Վանի 1915 թվականի ինքնապաշտպանության ժամանակ*

«Անորոշությունից խուսափումը» մշակույթների դասակարգման սկզբունք է, որն առաջարկել է սոցիալական հոգեբան Գիրտ Հոսֆսթեդեն: Ըստ Հոսֆսթեդեի, անորոշությունից խուսափող (կամ անորոշություն չհանդուրժող) մշակույթները տարբեր միջոցներով կարգավորում են իրենց շուրջ եղած աշխարհը՝ կյանքն ավելի որոշակի և կանխատեսելի դարձնելու համար: Վան քաղաքի հայերի մինչև 1915 թվականի առօրեականության ուսումնասիրությունը բացահայտում է անորոշությունից խուսափելու մի շարք սովորույթներ, ինչպիսիք են, օրինակ, սահմանումը, սահմանազատումը, գրանցումը, խնայումը և նախապատրաստումը: Անորոշությունից խուսափելու առօրեական այս պրակտիկաները կարելի է տեսնել նաև 1915 թվականի ապրիլ-մայիսյան ինքնապաշտպանության ժամանակ: Ձեկուցման մեջ շոշափվելու են այս հարցերը:

**ՏԻԳՐԱՆ ՄԱԹՈՍՅԱՆԸ** պատմական գիտությունների թեկնածու է: 2015 թվականից Հայոց պատմություն է դասավանդում Հայաստանի ամերիկյան համալսարանում: Նրա ներկայիս հետազոտական հետաքրքրությունների շրջանակում են հայ ժողովրդի սոցիալական պատմության տարբեր հարցեր, որոնցից է, օրինակ, Վան քաղաքի հայերի առօրեականությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, ինչպես նաև պատմության դասավանդումը՝ որպես քննադատական մտածողությունը խթանելու եղանակ:

# TIGRAN MATOSYAN

## *Uncertainty Avoidance. Manifestations of Everyday Life during the 1915 Self-Defense of Van*

"Uncertainty avoidance" is a principle of cultural classification which has been proposed by social psychologist Geert Hofstede. According to Hofstede, those cultures that avoid uncertainty order the world around them through various means to make life more certain and predictable. The study of the everyday life of the Armenians in Van before 1915 unveils several habits of avoiding uncertainty, which include demarcation, registration, saving and preparation. Those everyday practices of avoiding uncertainty can be detected also in the 1915 April-May self-defense of Van. The paper touches upon those practices.

**TIGRAN MATORSYAN** has a PhD in Historical Studies from the Armenian National Academy of Sciences in 2004. Since 2015 he has been teaching Armenian history at the American University of Armenia. His current research interests include various questions regarding the social history of the Armenian people, for instance, the everyday life of late 19th and early 20th century Armenians in Van as well as the teaching of history as a means of promoting critical thinking.

# ԱՆՆԱ ԳԱԼՍՅԱՆ

## *Որքն իրքն սեփական պատմության հեղինակ. մերժումից անդին*

Չանգվածային կոտորածների ու ցեղասպանության, տեղահանության ու գաղթի պատճառով հայության համար 20-րդ դարը մեծապես բացվում է որբության կշանի տակ: Ծայրահեղ գրկանքի փորձը իրար է կապում ազգային պահանջատիրությունը, հեղափոխական քաղաքականությունն ու արվեստը: Մի կողմից որբը մղվում էր ան ազատագրական պայքար, մյուս կողմից ապավինում հոգևոր ուժերին (գաղափարից մինչև լեզու և արվեստ): Կոտորածի իրողությունն ու բոլշևիկյան հեղափոխության իրագործումը Հայաստանում նախկին որբ, այնուհետև խորհրդային լրագրող, հասարակական գործիչ Ադո Ադոյանին դարձնում են հեղափոխության նվիրյալ մարտիկ և արմատական կոմունիստ:

Ադո Ադոյանի՝ Վահան Թոթովենցի *Հայ ազգի փրկիչ դաշնակներ* գրքույկի անողորք քննադատության օրինակով գեկուցման մեջ փորձ ենք անելու քննության ամենի որբի արմատականությունն ու իր մերժածի հետ հուզական կապը: Արմատական լինելու որբի այս գիծը շատ լավ «արդարացնում էր» հենց Թոթովենցը, երբ այդ գրքույկից շատ ավելի շուտ ուղղում էր իր ողբ-ձոնը որբերին:

**ԱՆՆԱ ԳԱԼՍՅԱՆ** արվեստաբան է, արվեստագիտության թեկնածու, դոցենտ: Դասավանդում է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում: Համադրել է մի շարք ցուցահանդեսներ, հանդես եկել գիտական հոդվածներով և հրապարակումներով: Զբաղվել է և շարունակում է զբաղվել Արշիլ Գորկու արվեստի քննադատական ընդունելության հարցերով: Գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է մշակույթի տեղական և միջազգային պրակտիկաների համադրման փորձառությունների, մոդեռնիզմի և ժամանակակից արվեստի արտիկուլացիաների, հայ արդի հասարակական մտքի առաջացման և զարգացման ուղիների, հայ ժամանակակից արվեստի կրթության ուսումնասիրությունը:

# ANNA GALSTYAN

## *The Orphan as Author of Her Own Story: Beyond Rejection*

Due to the massacres at the turn of the 19th century, the genocide, displacement and emigration, the 20th century for Armenians is largely conceived in terms of orphanhood. The experience of extreme scarcity connects national demands, revolutionary politics and art. On the one hand the orphan strives towards a liberation struggle and on the other hand, she relies on spirituality (from ideas to language and art). The reality of the massacres and the realization of the Bolshevik revolution in Armenia turned the formerly orphan and subsequently Soviet journalist Ado Adoyan into a dedicated revolutionary and radical communist.

On the example of Ado Adoyan's scathing criticism of Vahan Totovents's book *Dashnaks as Saviors of Armenians* this paper examines the radicalism of the orphan and his emotional connection to that which he has rejected. Totvents himself "justified" the radicalism of the orphan by directing his grief-homage to the orphans.

**ANNA GALSTYAN** is an art historian, a doctor and docent of Art History. She teaches at the Yerevan State Academy of Fine Arts. She has curated several exhibitions and published scholarly articles. Her research interests revolve around the critical reception of Arshile Gorky's art, the experiences of synthesis of local and international culture, the paths of the development of modern Armenian social thought and the study of contemporary art education in Armenia.

## ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**19-րդ դարում ժան-ժակ Ռուսոյի հայկական ընդունելության երկու դեպք. Հովհաննես Չամուռճյան և Միքայել Նալբանդյան**

Ժնևցի փիլիսոփայի քաղաքական հայացքների հայ ընդունելության կարևոր օրինակ է վերջինիս գլխավոր քաղաքական երկի՝ *Հասարակական դաշինքի* հայերեն առաջին թարգմանությունը: Այն գրաբար է թարգմանվել 1829 թվականին արևմտահայ իրականության մեջ՝ ծայրահեղ պահպանողական Հովհաննես Չամուռճյանի կողմից: Ուշագրավ է այն հանգամանքը, որ թարգմանիչն ինքը Ռուսոյի ամենասուր քննադատն էր և թարգմանությունն իրականացրել էր հենց հեղինակի հայացքները՝ թարգմանությանը կից աշխատության մեջ հերքելու նպատակով: Ոչ պակաս ուշագրավ է արևելահայ լուսավորիչ Միքայել Նալբանդյանի վերաբերմունքը Ռուսոյի քաղաքական փիլիսոփայության հանդեպ: Նալբանդյանի համար Ռուսոն, հակառակը, մարմնավորում է «ճշված մարդկության» քաղաքական փրկչի կերպարը: Հենց այդպես է պատկերված ժնևցի փիլիսոփան մահամերձ Նալբանդյանի՝ բանտում գրած «Ժ. ժ. Ռուսոյի հիշատակին» բանաստեղծության մեջ: Պատահական չէ, որ Ռուսոյի մտքի հետ այսքան սերտ առնչություն, բայց և տրամագծորեն հակառակ վերաբերմունք ունեցած այս երկու հեղինակներն առիթ են ունեցել հրապարակային բանավեճի բռնվել, որի մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում փիլիսոփայի հանդեպ յուրաքանչյուր մտածողի դիրքորոշումը: Չեկուցումը կամփոփվի երկու խոսք ավելացնելով նրան, թե բուն բանավեճն ինչ է ասում մեզ Ռուսոյի հայկական ընդունելության մասին:

**ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ** ֆիզիկոս է, Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտի հետազոտող: Դասավանդում է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Արվեստաբանության ֆակուլտետում: Հովհաննիսյան ինստիտուտի «Ներքին գրոց» մատենաշարի շրջանակում կատարել է փիլիսոփա Միսաք Խոստիկյանի կյանքի և նրա ավարտաճանի վերաբերյալ պատմա-փիլիսոփայական հետազոտություն (*Դավիթ փիլիսոփան* (Երևան: Հովհաննիսյան ինստիտուտ, 2021)): Ներկայումս «Ժան-ժակ Ռուսոն հայոց քաղաքական և կրթական արդիականացման ճանապարհին» թեմայով ներգրավված է Հովհաննիսյան ինստիտուտի «Մշակույթ և արդիականացում» հետազոտական ծրագրում: Մասնագիտական հետաքրքրությունների շրջանակում են տեսական ֆիզիկան, ֆիզիկայի պատմությունը և փիլիսոփայությունը, փիլիսոփայության պատմությունը, հայ արդիության պատմությունը:



# ASHOT GRIGORYAN

## *Two Cases of the Armenian Reception of Jean-Jacques Rousseau: Hovhannes Chamurchian and Michael Nalbandyan*

An important example of the Armenian reception of the Genevan philosopher's political views is the first Armenian translation of his political work *The Social Contract*. It was translated to Grabar in 1829 in the Western Armenian milieu by Hovhannes Chamurchian. It is noteworthy that the translator himself was one of the sharpest critics of Rousseau and realized the translation in order to refute Rousseau's views in a work appended to the translation. No less noteworthy is Eastern Armenian writer Michael Nalbandyan's attitude towards Rousseau's political philosophy. For Nalbandyan, on the contrary, Rousseau embodied the figure of the political savior of the "oppressed people". This is how the Genevan philosopher is depicted in Nalbandyan's poem "In the Memory of J.J. Rousseau" which he wrote on his deathbed from prison. It is not accidental that these two authors who had entirely opposite but nevertheless close attachment to Rousseau's thought had the occasion to engage in a public debate displaying their respective attitudes towards the philosopher. The paper ends with reflections on the Armenian reception of Rousseau from the perspective of this debate.

**ASHOT GRIGORYAN** is a physicist and researcher at the Johannissyan Institute. He also teaches at the Yerevan State Academy of Fine Arts. In addition to his specialization in physics he is interested in the philosophy of science. Recently he completed an extensive research project on early 20th century Armenian philosopher Missak Khostikyan (*Missak Khostikyan. David the Philosopher* (Yerevan: Johannissyan Institute, 2021)). Currently he is involved in the Johannissyan Institute's project Culture and Modernization with a research theme "Jean-Jacques Rousseau on the Path of the Political and Educational Modernization of the Armenians". His research interests include theoretical physics, the history of physics, philosophy, history of philosophy and the history of Armenian modernity.

## ԱԼԼԱ ԶԼԱՏՈՊՈԼՍԿԱՅԱ

### *Ռուսոյի կրոնա-Էթիկական հայացքները 19-րդ դարի ռուս մշակույթում*

Չեկուցումը քննության է առնում 19-րդ դարի 30-ականներից մինչև դարավերջ ռուս մտավորական շրջանակներում ժան-ժակ Ռուսոյի կրոնա-Էթիկական հայացքների ընդունելությունը: Փորձ է արվելու հատկապես ցույց տալ Ռուսոյի փիլիսոփայության ներքին հակասականության ու նրա իրարամերժ ռուսական ընթերցումների ներքին կապը: Ռուսոյի ռուս թե՛ քննադատները, թե՛ հետևորդները վերջինիս մասին արտահայտվելիս իրենց գնահատականներում գրեթե միշտ ծայրահեղ կրքոտ են գտնվում, այդպիսով ինքնաբերաբար անգամ քննադատելիս շեշտում նրա մտքի կարևորությունը: Չեկուցման մեջ Ռուսոյի առանձնակի կարևորությունը ծավալվելու է առաջին հերթին խոսեցնելով 19-րդ դարի ռուս հեղինակներին՝ նրանց բառերով ու լեզվով տալով իրենց ժամանակի ռուսոյականության պատկերը:

**ԱԼԼԱ ԶԼԱՏՈՊՈԼՍԿԱՅԱՆ** ավագ գիտաշխատող է Սանկտ Պետերբուրգի Լուսավորության դարաշրջանի ուսումնասիրության կենտրոնում: 1990-2004-ին եղել է Ռուսաստանի ազգային գրադարանի՝ գրականության գիտական սիստեմավորման գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները ներառում են Վոլտերի գրական ժառանգության, ֆրանսիական ու ռուսական լուսավորության, Վոլտերի և ռուս մտքի, Ռուսոյի և ռուս մտքի աննչության հարցերը: Չլատոպոլսկայայի աշխատասիրությամբ է լույս տեսել 18-20-րդ դարերի ռուս իրականության մեջ Ռուսոյի և Վոլտերի մտքի ընդունելությունը վկայող վավերագրերի ծավալուն հատորները՝ А. А. Златопольская (խմբ.), Ж.-Ж. Руссо: *Pro et contra* (Санкт-Петербург: РХГА, 2005) և А. А. Златопольская (խմբ.), *Вольтер: pro et contra: антология* (Санкт-Петербург: РХГА, 2013):

# ALLA ZLATOPOLSKAYA

## *The Religious-Ethical Views of Jean-Jacques Rousseau in 19th Century Russian Culture*

The presentation discusses the reception of Jean-Jacques Rousseau's religious-ethical views in the third decade of the 19th century in Russia's intellectual circles. It attempts to specifically show the underlying contradictions of Rousseau's philosophy and the internal connections between the contradictory Russian readings of his works. Both the Russian critics and followers of Rousseau's work are always extremely passionate in their evaluations, and by this they stress the importance of his work while critiquing it. The presentation reveals Rousseau's exceptional importance by drawing a picture of the reception of the philosopher according to 19th century authors, in their own words.

**ALLA ZLATOPOLSKAYA** is a senior researcher at the Center of the Study of Enlightenment in St. Petersburg. In 1990-2004 she was a researcher of literary scholarly systematization at the National Library of Russia. Her research interests include the literary legacy of Voltaire, French and Russian enlightenment, the relations between Voltaire and Russian thought, Rousseau and Russian thought, amongst others. She is the author of several volumes documenting the reception of Rousseau and Voltaire in Russia: A. A. Златопольская (ed.) *Ж.-Ж. Руссо: Pro et contra* (Санкт-Петербург: РХГА, 2005) and A. A. Златопольская (ed.), *Вольтер: pro et contra: антология* (Санкт-Петербург: РХГА, 2013):

# ԺԻՐԱՅԻ ՄԱԼԽԱՍԵԱՆ

## Ո՞ր Ռուսն թարգմանել

Ձեկոյցին մեջ կը հարցաքննուին Ռուսոյի հայերէն թարգմանութեան դրդապատճառները՝ Ռուսո որպէս լուսաւորի՞չ կամ հակա-լուսաւորի՞չ, որպէս արդիականացնող կամ որպէս յեղափոխական՞ հետաքրքրած է հայերուն: Կը քննարկուին նաեւ Ռուսոյի *Հասարակական դաշինքի* տարբեր թարգմանութիւնները:

**ԺԻՐԱՅԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԸ** փիլիսոփայություն է դասավանդում Փարիզի համալսարանում: Վարում է *Conférences du Salon des Littératures arméniennes*-ը (Հայ գրականության հյուրասրահի ասուլիսները): Հանդես է գալիս հետազոտություններով, հոդվածներով և դասախոսություններով, որոնք վերաբերում են փիլիսոփայության դասավանդմանը և հայ գրականությանն ու մտքին: Հրատարակել է *Introduction à la philosophie morale* (Ellipses, 2002) և *Candide: un débat philosophique* (Ellipses, 2005) հատորները:

# GÉRARD MALKHASSIAN

## *Which Rousseau to Translate?*

The presentation will discuss the incentives of translating Rousseau into Armenian. Were Armenians interested in Rousseau as an enlightener or an anti-enlightener, as a modernizing figure or a revolutionary? The different translations of *The Social Contract* by Rousseau will also be examined.

**GÉRARD MALKHASSIAN** teaches philosophy at the University of Paris. He conducts Conférences du Salon des Littératures arméniennes (The podcasts dedicated to Armenian literature). His publications and lectures focus on the teaching of philosophy, Armenian literature and thought. He is the author of *Introduction à la philosophie morale* (Ellipses, 2002) and *Candide: un débat philosophique* (Ellipses, 2005).

# ԻՐԻՆԱ ՇԱՅՆԱԶԱՐՅԱՆ

## *Քաղաքական կարգի ու հաստատված կենցաղի «հրեշավոր կենակցությունը»*

1920 թվականին Հայաստանի խորհրդայնացմամբ երկրի նորահաստատ ղեկավարությունը կանգնեց մշակութային հեղափոխություն իրականացնելու անհետաձգելի խնդրի առջև: Հայաստանում իշխանության եկած քաղաքական գործիչները, սակայն, մշակութային հեղափոխության իրականացման մեկնարկին հենց ստիպված էին առերեսել քաղաքական իշխանության հաստատման արագության ու հարյուրամյակներով հաստատված մշակույթի վերափոխման դանդաղության միջև անհաղթահարելի տարբերությունը: Ուրեմն, հաստատված կենցաղի ու վարքուբարքի փոփոխման պահանջին հանդիման՝ հարց էր, թե այդ փոփոխությունն իրագործելիս ո՞ր չափով էին կուսակցական ղեկավարներն ապավինելու հենց քաղաքական միջոցներին:

Ինչպիսի՞ նախագիծ էր առաջադրում հեղափոխությունը հայաստանյան մշակույթի ու կենցաղի ասպարեզում կամ, այլ ձևակերպմամբ, մշակույթի ու կենցաղի ինչպիսի՞ դրությունը պետք է հեղափոխվեր հայ կոմունիստ գործիչների քաղաքականությամբ: Այդ հարցն է քննարկում գեկուցումը՝ բացահայտելով հենց հեղափոխության ներքին հիմնարար լարումը՝ լարումը քաղաքականության և մշակույթի միջև:

**ԻՐԻՆԱ ՇԱՅՆԱԶԱՐՅԱՆ** արվեստաբան է, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Կերպարվեստի ֆակուլտետի Արվեստաբանական բաժնի ասպիրանտ, Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտի հետազոտող: Ներկայումս դասավանդում է նաև Գեղարվեստի ակադեմիայում, ինչպես նաև «Կենցաղի արդիականացում և արդիական արվեստ. մշակութային հեղափոխության մարտահրավերները 1920-ականների խորհրդային Հայաստանում» թեմայով ներգրավված է Հովհաննիսյան ինստիտուտի «Մշակույթ և արդիականացում» հետազոտական ծրագրում: Գիտական հետաքրքրությունները ներառում են արվեստի և քաղաքականության, ավանգարդի և ռեալիզմի փոխհարաբերությունները, ինչպես նաև կանանց խնդիրները, քաղաքականության ու կենցաղի առնչակցությունները: Վերջիններիս շուրջ հանդես է եկել հոդվածներով և գեկուցումներով:

# IRINA SHAKHNAZARYAN

## *The "Monstrous Cohabitation" of the Political Order and the Established Customs*

With the sovietization of Armenia in 1920 the nascent government of the country confronted the urgent need for a cultural revolution. The political leaders who came to power in Armenia at the very start of the cultural revolution, however, had to face the insurmountable difference between the rapid formation of political power and the lethargic transformation of an entrenched culture formed throughout centuries. The question was to what extent the political leaders would rely on political methods on their path towards reforming the everyday customs and mores.

What kind of a project was the revolution proposing in the sphere of Armenian culture and everyday life? Or, in other words, which state of Armenian culture and customs had to be revolutionized through the politics of the Armenian communist leaders? The presentation discusses these questions by revealing the inner foundational tension within the revolution, the tension between politics and culture.

**IRINA SHAKHNAZARYAN** is an art historian. She is a PhD candidate at the Yerevan State Academy of Fine Arts and a researcher at the Johannissyan Institute. Currently she teaches at the Academy while conducting research in the framework of Johannissyan Institute's project "Culture and Modernization", on the subject of "Modernization of Everyday Life and Modern Art: The Challenges of the Cultural Revolution in 1920s' Soviet Armenia." Her scholarly interests include the relationship between art and politics, avant-garde, and realism, as well as the women's problems, and the relationship between everyday life and politics.

## ԼՈՒՍԻՆ ՇԱԲՈՅԱՆ

*«Անիծված նյութական սղությունը» և լուսավորության «նահատակները»  
1920-ականների խորհրդային Հայաստանում*

Համաշխարհային կոմունիզմի գրավական՝ սոցիալիստական հասարակարգ կերտելու գործում ժողովրդի մասսայական անգրագիտությունը Հայաստանի խորհրդային իշխանություններին 1920-ական թվականների սկզբին կանգնեցրել էր հին կրթահամակարգի վերափոխման և նոր՝ խորհրդային դպրոցների բացման անհրաժեշտության առջև: Այդուհանդերձ, տնտեսական լրջագույն մարտահրավերներ առերեսող նոր պետականությունը նյութական ռեսուրսների գրեթե լիակատար բացակայության պատճառով ի վիճակի չէր զանգվածային անգրագիտության վերացման պահանջն ամբողջապես իրագործել:

Ձեկուցման նպատակն է վեր հանել խորհրդայնացման առաջին տարիներին լուսավորական քաղաքական նախագծերի և հայաստանյան իրականության միջև ի հայտ եկած սուր լարումներն ու հակասությունները: 1920-ականների սկզբի տնտեսական, քաղաքական ու մշակութային պայմաններն այս կերպ երևան են գալիս իբրև բարքի և քաղաքականության միջև ներքին հակասություններով ընթացող և լուսավորական քաղաքականությունը կազմավորող դիսամիկ, հարաճուն գործընթացներ:

**ԼՈՒՍԻՆ ՇԱԲՈՅԱՆ** արվեստաբան է, Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտի հետազոտող: Մասնակցել է Էրիկա Դոսսի՝ *Քսաներորդ դարի Ամերիկյան արվեստը* գրքի թարգմանական աշխատանքներին (թրգմ.՝ Վարդան Ազատյան): Ներկայումս «խորհրդային 1920-ականների մշակութային քաղաքականության մարտահրավերները հայ արվեստի հիմնարկման ճանապարհին» թեմայով հետազոտությամբ ներգրավված է Հովհաննիսյան ինստիտուտի «Մշակույթ և արդիականացում» հետազոտական ծրագրում: Հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է 19-րդ դարի արևելահայ քննադատական մտքի պատմությունը, արվեստի փիլիսոփայությունն, ինչպես նաև Հայաստանի Առաջին հանրապետության և խորհրդային Հայաստանի մշակութային հաստատությունների կայացման գործընթացները:



# LUSIN SHABOYAN

## *"Damned Material Scarcity" and the "Martyrs" of the Enlightenment in 1920s' Soviet Armenia*

On the pathway towards constructing socialism as a guarantor of world communism, the Soviet Armenian government was confronted with the urgent need to reform the old educational system and open new soviet schools because of the mass illiteracy of the people. However, due to the grave economic challenges and the lack of material resources, the new political power was incapable of completely eradicating mass illiteracy.

The paper aims to reveal the sharp tensions and contradictions between the political projects of enlightenment and Armenian reality in the first years of sovietization. The economic, political and cultural conditions thus appear as dynamic and oppositional processes unfolding through inner contradictions between customs and politics, processes that are formative for the politics of enlightenment.

**LUSIN SHABOYAN** is an art historian and researcher at the Johannissyan Institute. She participated in the translation of Erika Doss's *Twentieth-Century American Art* (trans. Vardan Azatyan). Currently, she is part of the Institute's research project Culture and Modernization with a research theme "The Challenge of the Cultural Politics of the Soviet 1920s': On the Path of the Formation of Armenian Art". Her research interests include the history of 19th century Eastern Armenian critical thought, philosophy of art, as well as the processes of the formation of the First Armenian Republic and Soviet Armenia.

# ԴՄԻՏՐԻ ԽՄԵԼՆԻՑԿԻ

## *Ստալինյան կոնստրուկտիվիզմ*

Խորհրդային ճարտարապետության պատմությունն ավանդաբար և հիմնավոր կերպով բաժանվում է երեք միմյանցից կտրուկ տարբերվող ռճական ժամանակաշրջանների. վաղ արդիական ճարտարապետության ժամանակաշրջան (այսպես կոչված «խորհրդային ավանգարդ» կամ «կոնստրուկտիվիզմ»)՝ 1920-ականների սկզբից մինչև 1932-ի գարուն, ստալինյան ժամանակաշրջանի ճարտարապետություն (1932-1955) և խրուշչով-բրեժնևյան ժամանակաշրջանի խորհրդային տիպի արդիական ճարտարապետություն: Բոլոր երեք գեղարվեստական ժամանակաշրջաններին համապատասխանում են երեք տարբեր, մեկը մյուսի մեջ թափանցող քաղաքական ռեժիմներ՝ մինչստալինյան (ՆԷՊ-ի շրջան), ստալինյան և հետստալինյան, այն վերապահմամբ, սակայն, որ ստալինյան ռեժիմը ձևավորվել է 1927–1928 թվականներին, այլ ոչ թե 1932-ին, ինչի արդյունքում իր գոյության վերջին հինգ տարիներին կոնստրուկտիվիզմը, ռճական իմաստով մնալով արդիական ճարտարապետություն, սոցիալական բովանդակությամբ և տիպաբանությամբ պատկանում էր արդեն ստալինյան ժամանակաշրջանին: Ձեկուցումը վերլուծում է խորհրդային արդիական ճարտարապետության ստալինացման գործընթացը 1932 թվականի ստալինյան ռճական հեղափոխությանը նախորդած ժամանակաշրջանում:

**ԴՄԻՏՐԻ ԽՄԵԼՆԻՑԿԻՆ** ճարտարապետ է, ճարտարապետության պատմաբան: 2003-ին Բեռլինի տեխնիկական համալսարանում պաշտպանել է «Ստալինյան ճարտարապետությունը. գաղափարախոսություն և ոճ (1929-1960)» ատենախոսությունը: Խորհրդային ճարտարապետության պատմությանը, ինչպես նաև ռազմական և քաղաքական պատմությանն անդրադարձող գրքերի ու հոդվածների հեղինակ է: Ներկայումս աշխատում է Բեռլինի Dom Publishers ճարտարապետական հրատարակչությունում: Ավարտում է աշխատանքն իր *Պետանվտանգության ճարտարապետությունը* գրքի վրա: Վարում է խորհրդային ճարտարապետության դասընթացը Մոսկվայի Ազատ համալսարանում:

# DMITRY KHMELNITSKY

## *Stalinist Constructivism*

The history of Soviet architecture is traditionally divided between three stylistic periods which are fundamentally different from each other: the early modern architectural period (or “Soviet Avant-garde, or “Constructivism”) – from 1920 to the spring of 1932; the period of Stalinist architecture – from 1932 to 1955, and the modern architecture of the Soviet type of Khrushchev and Brezhnev periods. Each artistic period corresponds to three different and intersecting political regimes: proto-Stalinist (NEP), Stalinist, and post-Stalinist, with the qualification that the Stalinist regime was formed in 1927-28 and not in 1932. As a result of this discrepancy, constructivism, in the last five years of its existence, while remaining stylistically modern in architecture, due to its social content and typology, belongs to the Stalinist period. The presentation analyzes the Stalinization of Soviet architecture in the period preceding the 1932 Stalinist stylistic revolution.

**DMITRY KHMELNITSZKY** is an architect and architectural historian. In 2003 he defended his dissertation on the subject of “Stalinist Architecture. Ideology and Style (1929-1960)” at the Technical University of Berlin. He has authored books and articles on the history of Soviet architecture, as well as Soviet military and political history. He is currently working in the publishing house Dom Publishers in Berlin and teaches the course Soviet Architecture in Moscow Free University. His upcoming book is titled *The Architecture of State Security*.

Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտը (Հովհաննիսյան ինստիտուտ) հիմնադրվել է 2014 թվականին Երևանում: Ինստիտուտի տեսլականը հումանիտար գիտությունների ոլորտում քննական հետազոտություններ իրականացնելն ու խթանելն է, որոնք, մի կողմից, ընթանում են ուսումնասիրության բուն առարկայի տրամադրած հնարավորությունների ճանապարհով, մյուս կողմից, գիտակցում են սեփական մեթոդաբանական ու տեսաբանական հիմքերը: Ինստիտուտը խրախուսում է տեսական և փիլիսոփայական հետազոտություններ, նոր մեթոդների մշակում, ինչպես նաև հետազոտություններ, որոնք չեն սահմանափակվում հայագիտական թեմաներով: Այդուհանդերձ, վերջիններիս համար հայկական կամ հայաստանյան փորձառությունը հանդես է գալիս որպես աշխարհը տեսնելու դիտակետ տրամադրող դիրքավորում, մի վայր, որտեղ հատվում են տարբեր մտայնություններ ու ժառանգություններ: Պատմական ժամանակաշրջանի իմաստով Ինստիտուտը չունի հետազոտական սահմանափակումներ, բայց առաջնահերթություն է տրվում նոր ժամանակներին կամ Արդիությանը վերաբերող ուսումնասիրություններին: Ինստիտուտը կրում է մտքի պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի (1887-1972) անունը, ում գիտական գործունեությունը հետևողականորեն և դինամիկ կերպով միահյուսել է նյութի հանդեպ հոգատարությունը, գիտական անաչառությունը, տեսաբանական խորությունն ու քաղաքական դիրքորոշումը: Հովհաննիսյանի պատմագիտությունը հայերին ու Հայաստանը քննականորեն հանդես են բերում որպես ազատագրական պայքարների միջազգային բարդ հյուսվածքներում ներգրավված, իրենց ապագան գեներացնող գործուն սուբյեկտներ:

The Ashot Johannissyan Research Institute in the Humanities was founded in 2014 in Yerevan. The Institute aims to develop a theoretically and methodologically informed research sensitive to the possibilities of study offered by the object itself. The Institute encourages theoretical and philosophical research, development of new methodologies, as well as studies not confined to the framework of Armenian Studies. Yet the Institute formulates its objectives taking both the Armenian historical experience and Armenia as a position that provides a particular perspective onto the world, a perspective where various conflicting trends and legacies intersect. The historical scope of research is not limited to a particular period, though a priority is given to the studies of Modernity and the Modern period. The Institute is named after intellectual historian Ashot Johannissyan (his last name is spelled differently in various transliterations, such as Hovhannisyan, Ioannisyan, Johannissyants) (1887-1972) whose historical scholarship had consistently and dynamically intertwined care towards material, factual precision and theoretical rigor with a political stance, in order to critically position Armenians as active subjects entangled in the complex web of international struggles for liberation with the capacity to generate their own future.

Խանջյան 19, 5-րդ հարկ, Երևան

Khanjyan 19, 5th floor, Yerevan

